Հաստատում եմ՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր

տեխնիկական գիտությունների թեկնածու,

դոցենտ Խ. Ղազեյան

03/07/2026թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Արմեն Արարատի Միրզոյանի «Քաղաքական կայունության գործոնների համեմատական վերլուծությունը Հայաստանի Հանրապետության և Իսրայել պետության քաղաքական համակարգերի փոխակերպումներում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի նիստում (22.06.2026, արձանագրություն N 6): Ամբիոնի նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչ, հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Պետրոսյանը, ՀՀ ՊԿԱ ուսումնական գծով պրոռեկտոր, քաղ. գիտ. թեկնածու Է. Ալեքսանյանը, հոգ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Ռ. Վ. Աղուզումցյանը, ՀՀ ՊԿԱ գիտական քարտուղար, հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս. Պողոսյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մ. Մ. Մարգարյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Մարգարյանը, քաղ. գիտ. թեկնածու Գ. Ղուկասյանը, գործավար Ս. Յ. Ավագյանը:

Նոր աշխարհակարգի կայացման և գլոբալ կառավարման հարաբերությունների զարգացման գործընթացներին բնորոշ են տուրբուլենտությամբ և անորոշությամբ հագեցած խաղային իրավիճակները: Նման իրավիճակներն ազդում են հանրային կյանքի տարբեր ոլորտների վրա՝ ցանցավորելով աշխարհում առկա անկայունությունն ու տուրբուլենտությունը: Հետևաբար, հրամայական է դարձել, օգտվելով գլոբալ կառավարման քաղաքականության ընձեռած ադապտացման, ճկունության և ինքնակազմակերպման հնարավորություններից, ավելի համակարգված ուսումնասիրել քաղաքական կայունությունը և այդ նպատակի համար միջազգային կազմակերպությունների մշակած զարգացման ինդեքսները:

Այս դիտանկյունից՝ **Ա. Ա. Միրզոյանի** ատենախոսական աշխատանքը, ներառելով արդի քաղաքական գիտության (Political Science) զարգացման ժամանակակից միտումները, համակարգված ներկայացնում է **քաղաքական կայունության գործոնների համեմատական վերլուծությունը Հայաստանի Հանրապետության և Իսրայելի Պետության քաղաքական համակարգերի փոխակերպումների գործընթացում**: Հեղինակը փորձել է բացահայտել պետությունների առջև ծառացած մարտահրավերները և դրանց պատասխանելու իրական հնարավորությունները:

Այս առումով ակնհայտ են ուսումնասիրված թեմայի արդիականությունը և տեսական ու կիրառական նշանակությունը: Ավելին, ատենախոսությունն իր տեսակով առանձնահատուկ է, քանի որ հեղինակը նպատակադրված փորձել է քաղաքական կայունության ուսումնասիրությունն իրականացնել **Հայաստանի Հանրապետության և Իսրայելի Պետության** քաղաքական կառավարման արդիականացման հիմնախնդիրների վերլուծությամբ՝ համեմատելով դրանց **զարգացման ինդեքսների կիրառելիության մակարդակը, ինստիտուցիոնալ կայացածությունը, սոցիալ-մշակութային պայմանները և անվտանգայնացման միջավայրը:**

Արդի տուրբուլենտությամբ և անորոշությամբ հագեցած իրողությունները հետազոտական նոր հորիզոններ են բացել զարգացող երկրների քաղաքական գիտության (Political Science) առջև՝ հնարավորություն ստեղծելով զուգահեռ ուսումնասիրելու քաղաքական կայունություն ապահովող գործընթացների քաղաքական,

սոցիալական, տնտեսական, անվտանգային գործոնների փոխհարաբերություններն ու փոխազդեցությունները: Դա, պայմանավորված լինելով գլոբալ կերպափոխումներով, առաջին հերթին հիմնվում է պետական ինստիտուտների կայացման, զարգացման և բնականոն արդիականացման (ոչ թե մեխանիկական արևմտականացման) գործընթացի հետևողական ուսումնասիրման վրա: Այս համատեքստում անորոշ և տուրբուլենտ միջավայրում քաղաքական համակարգի փոխակերպումների գործընթացը, որը կարող է **քաղաքական կայունության ապահովման** հիմնական երաշխիք համարվել, ներառում է շարունակական բարեփոխումներն ու դրանից բխող քաղաքական, քաղաքատնտեսական և կառավարչական համարժեք որոշումների ընդունումը՝ հանուն մարտահրավերների դիմակայման և կայուն զարգացման: Ենթադրվում է, որ քաղաքական կայունության նման ընկալմամբ է պայմանավորված կյանքի որակի և մակարդակի շարունակական ապահովումը և՛ զարգացած, և՛ զարգացող երկրներում:

Գնահատելի է այն հանգամանքը, որ աշխատանքում հեղինակը կարևորել է քաղաքական համակարգի կայունության չափման ինդեքսների համադրելիության և կիրառելիության խնդիրը՝ հաշվի առնելով Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգերի կառուցվածքային ու գործառնական առանձնահատկությունները: Այս դիտանկյունից հետազոտության **նպատակը հստակ ձևակերպված է՝** բացահայտել քաղաքական համակարգի կայունության վրա ազդող հիմնական գործոնները՝ ինչպես ներքին (ինստիտուցիոնալ զարգացում, սոցիալ-տնտեսական պատկեր, կառավարման արդյունավետություն), այնպես էլ արտաքին (աշխարհաքաղաքական միջավայր, անվտանգության մարտահրավերներ, միջազգային ազդեցություններ) համատեքստում:

Ելնելով այդ նպատակից՝ հեղինակն ընդգծված հիմնավորել է այն դիրքորոշումը, որ Հայաստանի և Իսրայելի համեմատական վերլուծությունը ոչ միայն հնարավորություն է տալիս գնահատելու երկու երկրների քաղաքական համակարգերի կայունության մակարդակներն ու միտումները, այլև բացահայտելու այն գործնական մեխանիզմները, որոնք ապահովում են համակարգի դիմադրողականությունն ու շարունակականությունը ճգնաժամային իրավիճակներում:

Բազմամակարդակ անորոշություններով և տուրբուլենտությամբ հագեցած նոր աշխարհակարգի կայացման գործընթացը ստիպում է նորովի դիտարկել քաղաքական համակարգերի փոխակերպումների **գործառութակառուցվածքային, սոցիալ-հոգեբանական, գոյաբանական և քաղաքակրթական արժեհամակարգերը**:

Այսօր աշխարհում «ուժային բևեռների» միջև պարբերաբար տեղի են ունենում անկանխատեսելի զարգացումներ, որոնց համալիր ուսումնասիրումը ենթադրում է նաև միջազգային կազմակերպությունների կողմից մշակված ինդեքսների գլոբալ կիրառելիության համեմատական վերլուծություն: Այս դիտանկյունից **Ա. Ա. Միրզոյանի «Քաղաքական կայունության գործոնների համեմատական վերլուծությունը Հայաստանի Հանրապետության և Իսրայել պետության քաղաքական համակարգերի փոխակերպումներում» թեմայով** ատենախոսական աշխատանքը համեմատական քաղաքագիտության տիրույթում ՀՀ-ում ակադեմիական ներկա դիսկուրսի օրակարգ դարձնելը և ներկայացնելը արժանի է ուշադրության երկու երկրների պետականաշինության մշակույթի և էվոլյուցիոն արդիականացման գործընթացների առանձնահատկությունների բացահայտման առումով:

Միաժամանակ, քաղաքական համակարգերի փոխակերպումների ուսումնասիրությունը, մասնավորապես **Իսրայելի Պետության** օրինակով, նպաստում է պետության ինստիտուտի մշակութա-քաղաքակրթական էվոլյուցիոն արդիականացման խորքային ընկալմանը և հետագայում կարող է գործնական հենք լինել պետական կառավարման բարեփոխումների իրականացման և երկարաժամկետ կայուն զարգացման ռազմավարությունների մշակման համար:

Սույն աշխատանքի գիտական նորույթը **նպատակի ձևակերպման** մեջ է. հայաստանյան հետազոտական դաշտում առաջին անգամ քաղաքական գիտության տեսանկյունից իրականացվել է Հայաստանի Հանրապետության և Իսրայելի Պետության քաղաքական համակարգերի փոխակերպումների վերլուծություն: Այն քաղաքական կայունության և կառավարման արդյունավետության փոխհարաբերության համակցված ուսումնասիրություն է, որը բացահայտում է քաղաքական կայունության, արդիականացման և քաղաքական համակարգի փոխակերպման գործընթացների

փոխկախվածությունը և կատարված եզրակացությունների հիման վրա որոշ առաջարկություններ է անում՝ պետական քաղաքականության մշակման և քաղաքական կառավարման բարելավման վերաբերյալ:

Ատենախոսության թեման հայաստանյան համեմատական քաղաքագիտական հետազոտական դաշտում նորություն է, քանի որ ուսումնասիրված է **կայացման, արդիականացման և միջազգային ինդեքսների** օգտագործման բավականաչափ տարբեր արդյունքներ գրանցած երկրների փորձը՝ նկատի ունենալով թե՛ քաղաքականության, թե՛ կառավարման արդյունավետության փոխազդեցությունը:

Ատենախոսությունը հիմնված է համակցված մեթոդաբանական մոտեցման վրա՝ միաժամանակ ընդգրկելով թե՛ որակական, թե՛ քանակական հետազոտական մեթոդներ:

Հետազոտության տեսական մասում վերլուծված է գիտական գրականությունը՝ քաղաքական կայունության և կառավարման արդյունավետության փոխկապակցվածությունը բացահայտելու միտումով: Իսկ ինստիտուցիոնալ կայացվածության էմպիրիկ ուսումնասիրությունն իրականացվել է համեմատական մեթոդների դերի ուսումնասիրության միջոցով:

Հետազոտությունն ունի հարուստ աղբյուրագիտական հենք. մասնավորապես, օգտագործվել է ատենախոսության թեմային առնչվող ինչպես ակադեմիական գրականություն, այնպես էլ ռազմավարական և հայեցակարգային փաստաթղթեր, ուսումնասիրվող երկրների մասին համացանցային պաշտոնական կայք-էջերում տեղ գտած տեղեկություններ ու վիճակագրական տվյալներ: Կատարված վերլուծությունից ակնհայտ է, որ քաղաքական կայունությունը, կառավարման արդիականացումը, արդյունավետության ապահովումը պայմանավորված են ոչ միայն ինստիտուցիոնալ կերպափոխություններով, այլև քաղաքական կամքի դրսևորման, կադրային ներուժի զարգացման ծրագրերի իրականացման անհրաժեշտությամբ:

Ուսումնասիրության արդյունքում հիմնավորվել է, որ քաղաքական կայունության և կառավարման արդյունավետության միջև առկա է փոխադարձ կապ: Այդ կապը, ազդելով արդիականացման գործընթացների վրա, ընդարձակում է քաղաքական համակարգի փոխակերպումների գաղափարա-արժեբանական տարածությունը:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված վեց հոդվածները համապատասխանում են ատենախոսության հիմնական օրինակի բովանդակությանը: Վերոշարադրյալը հիմք ընդունելով՝ կարող ենք եզրակացնել, որ Ա. Ա. Միրզոյանի «Քաղաքական կայունության գործոնների համեմատական վերլուծությունը Հայաստանի Հանրապետության և Իսրայել պետության քաղաքական համակարգերի փոխակերպումներում» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից նմանօրինակ աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Հաշվի առնելով ուսումնասիրվող թեմայի բազմամակարդ մեկնության հնարավորությունները՝ հարկ ենք համարում ընդգծել, որ աշխատանքի հեղինակ Ա. Ա. Միրզոյանի ջանքերը, անխոս, խրախուսելի և գնահատելի են, մանավանդ որ թեման բազմաչափ է: Նույնիսկ կարելի է ասել, որ թեմայի ուսումնասիրությունը ենթադրում է անհատական նախասիրություններ, հատկապես դիտարկվող տարաբնույթ ինդեքսների կիրառելիության առումով՝ պայմանավորված ուսումնասիրվող երկրների զարգացման, ռազմավարական կայունության, խաղաղության և պատերազմի խաղային քաղաքականության արժեքանության ներկայացմամբ: Այս համատեքստում հատուկ ուսումնասիրված է քաղաքական համակարգի կայունության չափման ինդեքսների համադրելիության և կիրառելիության խնդիրը՝ հաշվի առնելով Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգերի կառուցվածքային ու գործառնական առանձնահատկությունները:

Գնահատելով աշխատանքի հեղինակ Ա. Ա. Միրզոյանի ջանքերը՝ այդուհանդերձ, նրա հետ երկխոսելու մտադրությամբ, **առանձնացրել ենք մի շարք տեսական և կիրառական մոտեցումներ, որոնք ապագայում կարող են օգտակար լինել հեղինակին՝ թեման առավել խորացված ուսումնասիրելու համար**: Մասնավորապես.

1. **Աշխատանքը կշահեր**, եթե հեղինակն օգտագործեր 1960-ականների վերջին և 1970-ականների սկզբին Գ. Ալմոնդի ղեկավարությամբ ու համեմատական քաղաքագիտությամբ զբաղվող Սկոտ Ֆլենագանի և Ռոբերտ Մունդի աշխատանքային խմբի կողմից իրականացված Ստենֆորդյան նախագծի նյութերը (**տե՛ս, Crisis, Choice,**

and Change: Historical Studies of Political Development. Edited by Gabriel A. Almond, Scott C. Flanagan, and Robert J. Mundt (Boston, Mass.: Little, Brown and Co., 1973. p. 717.): Այդ խումբը համեմատության մեջ ուսումնասիրել է քաղաքական կայունությունը, արդիականացումը և քաղաքական համակարգի տրանսֆորմացիան՝ որպես քաղաքական զարգացման (political development) **ինստիտուցիոնալ, կառուցվածքային և մշակութա-քաղաքակրթական** որակական փոփոխությունների բազմաչափ գործընթաց: Ըստ ակադեմիական դիսկուրսի՝ այս գործընթացի նշված որակական հատկանիշներից որևիցե մեկի բացակայությունը կամ մարգինալացումը հանգեցնում է քաղաքական զարգացման ճգնաժամերի (բաշխման, մասնակցության, շարժունակության, ինքնության, լեգիտիմության): **Հիմա՝ հարց. ինչո՞վ են միմյանցից տարբերվում ՀՀ-ում և Իսրայելի Պետությունում դրսևորվող ճգնաժամերը**: Ելնելով ակադեմիական բարեխղճությունից՝ կոնֆլիկտների հետ միասին անհրաժեշտ էր դիտարկել նաև ճգնաժամերի դրսևորման առանձնահատկությունները. չէ՞ որ դրանք տարբեր կերպ են ազդում քաղաքական համակարգի փոխակերպումների վրա:

2. **Կարծում ենք, որ** թեման ուսումնասիրելիս անհրաժեշտ էր զուգամիտված ներկայացնել **քաղաքական կայունության և կայուն զարգացման հիմնախնդիրները**: Գաղտնիք չէ, որ տրանսազգային բիզնես կառույցները, իրենց շահերով պայմանավորված, գլոբալ, լոկալ և գլոլոկալ մակարդակներում ճկուն ռազմավարություններ են մշակել՝ հանքահումքային շուկաների գրավման նպատակով: Այս համատեքստում անկայուն և տուրբուլենտ միջավայրում **քաղաքական համակարգերի փոխակերպումների** գործընթացի հիմնական երաշխիքը, հատկապես հանքահումքային պաշարներով հարուստ ՀՀ-ի պարագայում, շարունակական բարեփոխումներն են՝ **քաղաքական կայունության և կայուն զարգացման զուգամիտման տրամաբանությամբ**:

3. **Ընդունված և հիմնավորված է ակադեմիական մոտեցում առ այն**, որ քաղաքական կայունության բարդ գործընթացը ենթադրում է սոցիալական համակեցություն ներառող հաղորդակցական սերտ կապերով փոխպայմանավորված AGIL (A՝ **ադապտացիա**, G՝ **գեներացիա**, I՝ **ինտեգրացիա (նաև՝ իդենտիֆիկացիա)**, L՝

լեգիտիմություն (նաև՝ լատենտություն, լեգալություն, լոյալություն)) ենթահամակարգի գործառույթների հետևողական իրականացում և մարտահրավերներին դիմակայելու հնարավորություն: Թ. Փարսոնսի մշակած AGIL կառուցակարգն ուղղված է սոցիալական համակարգում տեղեկատվահաղորդակցական հոսքերի բնականոն, հատվածային ալիքների զարգացման վերլուծությանը: Այն ներառում է **զգայականության, տարածաժամանակային ըմբռնողականության, հիշողության, տրամաբանության և հետևողականության հիման վրա** իրականացվող գործընթացների ռացիոնալ և իռացիոնալ վերլուծություն, ինչպես նաև ուտոպիստական թվացող ռազմավարական նախագծերն իրագործելու նպատակամետություն (**Парсонс Т.,** Система современных обществ / Пер. с англ. Л. А. Седова и А. Д. Ковалева. Под ред. М. С. Ковалевой, М.: Аспект Пресс, 1998)**: Հեղինակն ինչպե՞ս է պատկերացնում փարսոնսյան AGIL-ի կիրառելության խնդիրները ՀՀ-ում և Իսրայելի Պետությունում: Արդյոք անհրաժեշտ չէ՞ր ուսումնասիրել դրանք, քանի որ առանց AGIL-ի հետևողական կիրառման քաղաքական համակարգը պարբերաբար մարգինալացվում է և հեղափոխականացվում:**

4. **Աշխատանքը կշահեր,** եթե հեղինակն օգտագործեր Ս. Հանթինգթոնի «Քաղաքակրթությունների բախում» աշխատությունից հետևյալ եզրահանգումը. «90-ական թվականների կեսերին ամերիկյան հասարակության կողմից հայերին հատկացվող օգնության չափը կազմել է տարեկան 50-75 միլիոն դոլար: Սփյուռքի ներկայացուցիչները նույնպես քաղաքական զգալի ազդեցություն ունեցան այն երկրի կառավարության վրա, որը դարձել էր նրանց երկրորդ հայրենիքը: ԱՄՆ-ի ամենամեծ հայկական համայնքը գտնվում է առանցքային նահանգներում՝ Կալիֆոռնիայում, Մասաչուսեթսում և Նյու Ջերսիում: .....Հայաստանը դարձավ աշխարհի երրորդ երկիրը, որը ԱՄՆ-ից օգնություն էր ստանում՝ ըստ բնակչության թվի: Արտերկրից ստացված այդ աջակցությունը կարևոր դեր խաղաց վերապրած Հայաստանի հետագա կենսունակության հարցում, որտեղից էլ հասկանալի է, թե ինչու ձևավորվեց այն արդարացի կարծիքը, որ Հայաստանը կարող է դառնալ «Կովկասի Իսրայելը: Սակայն, սպասումները չարդարացան, կոռուպցիոն ռիսկերը մեծ էին....» (**Хантингтон С.,** Столкновение цивилизаций. Пер. с англ. Т. Велимеев. М.: АСТ,

2007, c. 456): **Այս համատեքստում աշխատանքը շատ կշահեր, եթե հանգամանալից դիտարկվեին կոռուպցիոն ռիսկերը և՛ ՀՀ-ում, և՛ Իսրայելում:**

5. **«Իսրայելի հիմնադիր-հայր»** և առաջին վարչապետ **Դավիդ բեն Գուրիոնը** (1886- 1973), երբ **1948 թվականի մայիսի 14-ին կարդաց Իսրայելի Պետության անկախության հռչակագիրը** և առաջինը ստորագրեց այն, հայտարարեց, որ իր պարտքն է կառուցել պետական ինստիտուտներ, իրականացնել երկրի զարգացմանն ուղղված բազմաթիվ ազգային ծրագրեր, ինչպես նաև համակարգել աշխարհով մեկ ցրված հսկայական թվով հրեաների ներգրավումը պետության կայացման գործում: **Անկախության հռչակագրից հետո ծավալվեցին սուր քննարկումներ, ավելի ճիշտ՝ ի հայտ եկան հակասություններ երկրի Սահմանադրության ընդունման վերաբերյալ:** Դավիդ Բեն-Գուրիոնը կողմ էր Մեծ Բրիտանիայի օրինակին: Այդ մոտեցմամբ կանխվեցին կրոնական և աշխարհիկ հակասությունները: Բացի դրանից, կանխվեց և աննպատակահարմար համարվեց ազգային ինքնության որոնման պատրվակով **պատմության վերանայման, վերարժևորման վիճահարույց և չարդարացված հարցադրումը՝ «Ո՞վ է հրեան»**, նաև՝ թե ինչպես պետք է հավասարակշռվեն Իսրայելի՝ որպես «հրեական և ժողովրդավարական պետության» սկզբունքները: Քանի որ նորաստեղծ պետությունն ուներ **անվտանգության, կայացման և հզորացման խնդիրներ,** որոշվեց առաջին հերթին երկրում քաղաքական կայունություն ապահովել **Modus vivendi** սկզբունքով՝ «համաձայնություն պայմանների շուրջ, որոնք թույլ են տալիս համակեցություն՝ չնայած տարաձայնություններին»: Այս նկատառումներով 1950 թվականին ընդունվեց **Հարարիի բանաձևը (Harari Resolution),** որի համաձայն՝ **Իսրայելի Կնեսետը (Knesset)** ընդունում է առանձին Հիմնարար օրենքներ, որոնք ոչ մի կերպ չեն կարող անտեսել հուդայականությունը և հրեաների միավորումը: **Կարծում ենք, որ աշխատանքը կշահեր, եթե հրեական մոտեցման հիմքով հեղինակը զուգահեռ դիտարկեր ՀՀ-ում պարբերաբար ծավալվող «Ո՞վ է հայը» դիսկուրսի հանրային համակեցությունը, ազգային ինքնությունը և անվտանգությունը խաթարող բնույթը:**

6. **Աշխատանքը կշահեր, եթե Հայաստանի Հանրապետության և Իսրայելի Պետության** համեմատական վերլուծությունը կատարելիս ի սկզբանե ներկայացվեր այն որոշիչ հանգամանքը, որ Իսրայելի Պետությունը իրավաբանորեն հիմնված է **Անկախության հռչակագրի (1948)** և նրա աշխարհիկ իրավունքի համակարգի վրա, բայց նրա հոգևոր հիմքը **հուդայականությունն է**: Ըստ էության, **Թորան (Մովսեսի առաջին հինգ գրքերը)** դիտվում է որպես ազգային ինքնությունը սահմանող ուխտ և ուսմունք: Միաժամանակ, **Թորան (Հալախա)** և՛ որպես Իսրայելի հետ կապի պահպանման պատմական հիմք է ծառայում հրեա ժողովրդի համար, և՛ ապահովում է ավանդույթի ազդեցությունը, քանի որ հուդայականության սկզբունքները ներառված են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգում: Սակայն Իսրայելը գործում է որպես ժամանակակից խորհրդարանական պետություն, այլ ոչ թե թեոկրատիա: Այս դիտանկյունից, ատենախոսության հեղինակ Ա. Ա. Միրզոյանը ինչպե՞ս է բացատրում և արդյոք խոցելի չի՞ համարում ՀՀ անկախացումից ի վեր տեղի ունեցող գծային ազատականացման հարատև գործընթացները և երկրի հեղափոխականացվածությունը: Գուցե անհրաժեշտ է Իսրայելի քաղաքական արդիականացման գործընթացի օրինակով ՀՀ-ում զուգամիտել (կոնվերգենցիա) կամ տեղաբաշխել (պերմուտացիա) ավանդական և ազատական արժեքները, ինչպես նաև խաղաղության և պատերազմի քաղաքական փիլիսոփայությունը՝ ըստ հրեա ականավոր մաթեմատիկոս, Երուսաղեմի հրեական համալսարանի պրոֆեսոր, Նոբելյան մրցանակի դափնեկիր (խաղերի տեսության վերլուծության միջոցով կոնֆլիկտի և համագործակցության էության ընկալման խորացման համար, 2005) **Ռոբերտ Աումանի (Robert John Aumann)** մշակած սկզբունքների, որոնք ներառված են Իսրայելի և՛ պետական կառավարման, և՛ կրթական համակարգերում:

7. Իսրայելում գործում են **Հիմնական օրենքներ (Basic Laws)**: Այդ 13 օրենքները (14-րդը՝ Օրենսդրության (Legislation) մասին, դեռևս լիովին ընդունված չէ), ըստ ընդունման հաջորդականության, հստակ նախագծում են երկրի քաղաքական համակարգի զարգացման տրամաբանությունը, ինչն էլ ապահովում է ինստիտուցիոնալ կայունություն: Ավելին, «**Ազգային պետություն. Իսրայելը՝ հրեա ժողովրդի ազգային օջախ** (2018 թ.)»

օրենքը Իսրայելը սահմանում է որպես հրեական ազգային պետություն, որտեղ ժողովուրդն իրականացնում է իր պատմական և մշակութային ինքնորոշման իրավունքը՝ շեշտադրելով հրեական մշակութային արժեքների բացառիկ կարգավիճակը: Այս օրենքի ընդունմամբ հատուկ, շեշտադրված բոլոր ինդեքսավորված փոփոխությունները քննվում են **հրեականության և հրեական պետության ռազմավարական կայունության ապահովման առումով: Հիմա՝ հարց.** այս համատեքստում արդյոք Ա. Միրզոյանը նպատակահարմար համարո՞ւմ է հանդես գալ առաջարկով՝ հիմնավորելով **ՀՀ-ում ևս այդպիսի օրենք ընդունելու հեռանկարային անհրաժեշտությունը՝ ի նկատի ունենալով Իսրայելի փորձը:**

8. **Աշխատանքի վերնագրից ենթադրվում է, որ պետք է ներկայացվեն քաղաքական կայունության էվոլյուցիան և Հայաստանի Հանրապետության և Իսրայել պետության** քաղաքական կառավարման արդիականացման համատեքստը: Արդիականացումը խիստ բարդ և բազմամակարդակ գործընթաց է, հետևաբար հնարավոր չէ համալիր ուսումնասիրել դրա համատեքստը՝ առանց երևույթի էվոլյուցիոն դիտարկման, արժեքանական փաստարկման, անվտանգային խնդիրների վերլուծության, քաղաքակրթական չափումների դրսևորման առանձնահատկությունների բացահայտման: Այս առումով անհրաժեշտ էր աշխատանքում համեմատական վերլուծություն կատարել՝ անդրադառնալով իսրայելցի ականավոր սոցիոլոգ և աշխարհահռչակ մակրոսոցիոլոգ **Շմուել Նոյ Էյզենշտադտի (1923-2010)՝ «բազմակի արդիականության» («multiple modernities»)** տեսության հիմնադիր և քաղաքակրթությունների զարգացման ու երիտասարդական սոցիոլոգիայի վերլուծաբանի գաղափարներին (տե՛ս, Эйзенштадт Ш., Революция и преобразование обществ. Сравнительное изучение цивилизаций / Пер. с англ. А. В. Гордона под ред. Б. С. Ерасова. — М., Аспект Пресс, 1999): Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը ՀՀ-ի ուսումնասիրման ժամանակ օգտագործեր նաև պրոֆեսոր Մարիամ Մարգարյանի՝ 2000 թվականից մինչ օրս հետևողականորեն կատարած ուսումնասիրությունները՝ նվիրված քաղաքական արդիականացման գործընթացի և՛ խաղային բնույթին, և՛ քաղաքակրթական կերպափոխումներին, և՛ ճգնաժամերի հաղթահարման, և՛ աստիճանակարգային ու ցանցային մոդելային դրսևորումներին (տե՛ս

Մարգարյան Մ. Մ., - Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր.- Եր., «Պետական ծառայություն», 2004, 308 էջ, **Մարգարյան Մ. Մ.,** Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում, - Եր., «Պետական ծառայություն» հրատարակչություն, 312 էջ, **Մարգարյան Մ. Մ.**- Քաղաքական արդիականացման քաղաքակրթական չափումները: Հայկական հեռանկարներ (հոդվածների ժողովածու), - Եր.: «Պետական ծառայություն», 2025, 484 էջ):

9. **Դասական իմաստով քաղաքական համակարգի փոխակերպումների գործընթացը ենթադրում է պետականաշինության մշակույթի էվոլյուցիա**: Այդ նկատառումով հեղինակը կարող էր տարբերակված ներկայացնել ժամանակակից պետությունների անվտանգության քաղաքականության մշակման առանձնահատկությունները՝ քաղաքական համակարգերի կայունության բազմաչափության ինդեքսի վերլուծության հիմքով (տե՛ս Политический атлас современности: Опыт многомерного статистического анализа политических систем современных государств. – М.: Изд-во «МГИМО–Университет», 2007. – 272 с.): **Այս մոտեցմամբ հեղինակը կարող էր ներկայացնել ի սկզբանե պառլամենտական կառավարմամբ հիմնադրված և արդյունքի կառավարման հիմքով գործառնվող Իսրայելի և պարբերաբար սահմանադրական դիզայնի մեջ գտնվող ՀՀ-ի քաղաքական համակարգի փոխակերպումների տարբերությունները՝ դա անելով ոչ թե մեխանիկական համեմատությամբ, այլ բանակաշինության գիտավերլուծական սկզբունքներով**: Համոզված ենք, որ նման մոտեցումը հեղինակին հնարավորություն կտար Իսրայելի Պետության օրինակով հիմնավորելու քաղաքական կայունությունը՝ որպես պառլամենտական ուժերի միջև շարունակական բարեփոխումներին հետամուտ, ինչպես նաև ազգային անվտանգության մշակույթի զարգացման հիմքով ծավալվող դիսկուրսային քննարկումների իրականացման ռազմավարական գործընթաց:

10. **Աշխատանքում բազմիցս ասվում է,** որ քաղաքական կայունությունը հայ քաղաքագիտական իրականությունում ուսումնասիրված չէ՝ ընդգծված նշելով միայն Ի. Բալյանի հոդվածը՝ հրատարակած 2004 թվականին (տե՛ս **Բալյան Ի.,** Քաղաքական

կայունության հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», N1 (112), Երևան, 2004): Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը առնվազն ծանոթանար դեռևս 2012 թվականին **ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ում գործող ՀՀ ԲՈՀ-ի 056 «Քաղաքական գիտություններ և միջազգային հարաբերություններ» մասնագիտական խորհրդում ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու նպատակով Մամիկոն Մարգարյանի պաշտպանած «Քաղաքական կայունությունը որպես Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման գործոն» վերտառությամբ ատենախոսությունը:** Քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Մարգարյանը շարունակում է զբաղվել քաղաքական կայունության թեմայով, ունի կայունությանը նվիրված մենագրություն և մեկ տասնյակից ավելի հոդվածներ:

11. Աշխատանքում առկա են **տեխնիկական թացթողումներ և լեզվական անհարթություններ**: Աշխատանքը խմբագրման կարիք ունի: Աշխատանքի վերնագրում գրված է՝ «Իսրայել Պետություն», մինչդեռ այդ երկրի պաշտոնական անվանումը Իսրայելի Պետություն է: Գրականության ցանկը ՀՀ ԲՈԿ-ի պահանջներով չի կազմված: Գրականության ցանկում բացակայում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի փոփոխություններով տարբերակը:

Հուսով ենք, որ վերոնշյալ դիտարկումները կօգնեն Ա. Ա. Միրզոյանին իր հետագա ուսումնասիրությունների ժամանակ:

Վերոշարադրյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ Արմեն Արարատի Միրզոյանի «Քաղաքական կայունության գործոնների համեմատական վերլուծությունը Հայաստանի Հանրապետության և Իսրայել պետության քաղաքական համակարգերի փոխակերպումներում» թեմայով ատենախոսությունը հիմնականում համապատասխանում է ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան

հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին և երաշխավորվում է հրապարակային պաշտպանության:

Եզրակացությունը հաստատվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի նիստում:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ,
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Լ. Հ. Պետրոսյան

Նիստի քարտուղար՝ Ս. Ավագյան

Ամբիոնի վարիչ Լ. Պետրոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ՊԿԱ գիտական քարտուղար,

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ս. Հ. Պողոսյան